

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.** Հասմիկ Ստեփանյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետական ֆինանսների վիճակագրության բաժնի պետ:

**Գործուղման վայրը և ժամկետները.** Ավստրիա, ք. Վիեննա, 2025թ. Օգոստոսի 4-8-ը:

**3. Հրավիրող կողմը.** Արժույթի Միջազգային Հիմնադրամ

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).** Մասնակցություն «Պետական հատվածի պարտքի վիճակագրություն-Հիմնարար (PSDS-fundamental)» թեմայով սեմինարին: Գործուղման նպատակն էր Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ներկայացվող պետական հատվածի պարտքի վիճակագրության հիմնարար սկզբունքներին, դասակարգումներին ծանոթանալը:

#### **Քննարկված թեմաները.**

- ✓ PSDS-ի նպատակներ և սկզբունքներ,
- ✓ Տվյալների տարածման և հավաքագրման կարևորություն,
- ✓ Պարտքի հասկացություններ (ֆինանսական ակտիվներ/պարտավորություններ, համախառն պարտք և զուտ պարտք), պարտքային գործիքների ճանաչում և դասակարգում, պայմանական պարտավորություններ,
- ✓ Պետական հատվածի պարտքի ինստիտուցիոնալ ծածկույթ, պետական հատվածի պարտքի սահմանազատում,
- ✓ Պետական պարտքի գնահատման և գրանցման մեթոդներ,
- ✓ Պետական հատվածի պարտքի վիճակագրության համախմբում,
- ✓ Կառավարության ֆինանսների վիճակագրության և պետական հատվածի պարտքի վիճակագրության միջև, պետական հատվածի պարտքի

- վիճակագրության և պարտքի կայունության վերլուծության միջև, պետական հատվածի պարտքի վիճակագրության և ֆինսկալ թափանցիկության միջև կա եր
- ✓ Կառավարության ֆինանսների վիճակագրության ոլորտի վերջին թարմացումներ,
  - ✓ ԱՄՀ-ի Տվյալների Որակի Գնահատման Չափորոշիչ (DQAF), կիրառություն պետական հատվածի պարտքի վիճակագրության նկատմամբ:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացին ներկա են գտնվել 16 երկրների 26 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի, տեխնիկական վարժություններ կատարելու ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Մասնակիցները բաժանվել են 3 խմբերի, որոնց առաջադրվել են հանրային հատվածի պարտքի վիճակագրության և կառավարության ֆինանսների վիճակագրության համախմբման, ոլորտային դասակարգումների տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքների արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Դասընթացի շրջանակներում կարևորվեցին պետական հատվածի սեկտորի զաղացիայի դերն ու նշանակությունը պետական ֆինանսների վիճակագրության բարելավման բնագավառում, որն էլ իր հերթին կբերի վիճակագրության որակի բարձրացմանը: Սեմինարի ընթացքում մեծ նշանակություն տրվեց փաստաթղթավորման գործընթացի կազմակերպմանը, որը հնարավորություն

կտա ունենալու հստակ դերակատարներ և գործընթացների հստակ նկարագրություն: Առանձին հատված նվիրված էր պետական հատվածի պարտքի համախմբմանը, մասնավորապես պետական և համայնքային ձեռնարկությունների պարտքի ներառմանը պետական հատվածի պարտքի վիճակագրության մեջ:

Վիճակագրության որակը բարձրացնելու համար առաջարկում եմ կատարել հետևյալ քայլերը.

- համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելուց հետո հաշվառել տեղական բյուջեների, ինչպես նաև պետական և տեղական ձեռնարկությունների պարտքը և դրանք ներառել պետական հատվածի պարտքի վիճակագրության մեջ,
- շահագրգիռ մարմինների հետ տեղեկատվության փոխանակման շրջանակներում կնքել համապատասխան հուշագրեր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

12.08.2025



ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ